



The Holy See

ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒՄԻ ԱՐԱՐՔ ՄԱՐԻԱՄԻ ԱՆԱՐԱՏ ՍՐՏԻՆ

Ով Մարիամ, Մայր Աստուծոյ եւ մեր Մայրը, մենք այս ցերեպէս պահուն, քեզի կը դիմենք: Դու Մայր ես, մեզ կը սիրես եւ մեզ կը հանչնաս. ոչ մէկ բան ծածուկ է քեզի մեր մտածումներէն: Ողորմութեան Մայր, բազմիցս փորձարկեցինք քու նախախնամական քննութիւնը, քու ներկայութիւնը, որ խղճողութիւն կը պարգեւէ, որովհետեւ դուն միշտ մեզ կ'առաջնորդես Յիսուսին՝ խղճողութեան Իշխանին:

Բայց մենք կորսնցուցինք խղճողութեան ուղին: Մոռցանք անցեալ դարուն ողբերգութիւններուն դասը, համաշխարհային պատերազմներուն միլիոնաւոր զոհուածներուն զոհաբերումը: Անտեսցինք պարտաւարութիւնները, զոր ստանձնեցինք, որպէս Ազգերու Հասարակութիւն եւ կը դաւանենք ժողովուրդներուն խղճողութեան երազները եւ երիտասարդներուն յայտերը: Հիւանդացանք ազատութեամբ, փախուցանք ազգային շահերուն մէջ, թոյլ տուինք թառամիլ անտարբերութեամբ եւ անդամալոյծ դառնալ եսասիրութեամբ: Նախընտրեցինք անտեսել Աստուած, ապրիլ մեր կեղծիքներով, սնուցել բռնութիւնը, սպաննել կեանքներ եւ կուտակել զէնքեր, մոռնալով, որ մենք պահապաններն ենք մեր մերձաւորին եւ միեւնոյն միասնական տան: Պատերազմով յօռտեցինք Երկրին պարտէզը, մեղով վիրաւորեցինք մեր Հօր սիրտը, որ մեզ կ'ուզէ իբրեւ եղբայրներ եւ քոյրեր: Դարձանք անտարբեր բոլորին եւ ամէն բանի նկատմամբ, բացի մեզմէ: Եւ ամօրով կ'ըսենք. Ներէ մեզի Տէր:

Մեղի թշուառութեան մէջ, մեր յոգնութիւններուն եւ դիւրաբեկութիւններուն մէջ, չարի եւ պատերազմի անօրինութեան խորհուրդին մէջ, դուն՝ Մայր սուրբ, մեզի կը յիշեցնես, որ Աստուած մեզ երբեք չի լքեր, այլ կը շարունակէ մեզի նայիլ սիրով, մեզ ներելու եւ վերականգնելու ցանկութեամբ: Ան է՝ որ քեզ պարգեւեց մեզի, եւ քու անարատ Սրտիդ մէջ դրաւ Եկեղեցւոյ եւ մարդկութեան համար ապաստան մը: Աստուածային բարութեամբ դուն մեր հետն ես եւ նոյնիսկ պատմութեան ամենանեղ դարձումներուն մէջ մեզ կ'առաջնորդես քննութեամբ:

Առ այդ քեզի կը դիմենք, կը բախենք քու Սրտիդ դուռը, մենք, քու սիրելի զաւակներդ, որոնց ամէն ժամանակներու մէջ չես յոգնիր այցելել եւ զօջումի հրաւիրել: Այս խաւար պահուն եկուր՝ մեզի օգնելու եւ մխիթարելու: Իւրաքանչիւրիս կրկնէ. «միթէ ես հոս չե՞մ, ես՝ որ քու Մայրդ եմ»: Դուն գիտես ինչպէս քեզի մեր սրտին թնճուկները եւ մեր ժամանակներուն հանգոյցները: Մեր վստահութիւնը կը դնենք քու վրայ: Վստահ ենք, որ դուն, մասնաւորապէս փորձութեան պահուն, չես արհամարհեր մեր աղերսները եւ կը հասնիս մեր օգնութեան:

Այնպէս ըրիր Գալիլէայի Կանայի մէջ, երբ արագացուցիր Յիսուսին միջամտութեան ժամը եւ ներկայացուցիր անոր

առաջին նշանը աշխարհին մէջ: Երբ տօնախմբութիւնը վերափոխուած էր տխրութեան, անոր ըսիր. «Գինի չունին» (Յովհ. 2,3): Դարձեալ կրկնէ զայն Աստուծոյ, ով Մայր, որովհետեւ այսօր մենք վերջացուցինք յոյսի գինին, անհետացաւ ուրախութիւնը, ջուրի վերածուեցաւ եղբայրութիւնը: Կորսնցուցինք մարդկայնութիւնը, վատնեցինք խաղաղութիւնը: Կարող դարձանք ամէն տեսակ բռնութեան եւ կործանումի: Հրատապ կարիքը ունինք՝ փութապէս միջամտութեանդ:

Ընկալէ ուրեմն ով Մայր մեր այս աղերսը.

Դուն՝ աստղ ծովու, թոյլ մի տար, որ նաւաբեկինք պատերազմի փոթորիկին մէջ:

Դուն՝ նոր ուխտի տապանակ, ներշնչէ հաշտութեան ծրագիրներ եւ հաճապարհներ:

Դուն՝ «Երկնային երկիր», Աստուծոյ համերաշխութիւնը վերադարձուր աշխարհ:

Մարէ ասելութիւնը, հանդարտեցուր վրէժխնդրութիւնը, մեզի սարկեցուր ներումը:

Ազատէ մեզ պատերազմէն, աշխարհը պահպանէ հիւլէականի սպառնալիքէն:

Վարդարանի Թագուհի, մեր մէջ արթնցուր աղօթելու եւ սիրելու կարիքը:

Մարդկային ընտանիքի Թագուհի, ցոյց տուր ժողովուրդներուն եղբայրութեան ձանապարհը:

Խաղաղութեան Թագուհի, աշխարհին համար խաղաղութիւն ընդունէ:

Քու ողբդ, ով Մայր, թող շարժէ կարծրածած սիրտերը: Արցունքները՝ որ թափեցիր մեզի համար, թող վերածաղկեցնեն այս հովիտը, զոր մեր ասելութիւնը ցամփեցուց: Եւ մինչ զենքերուն աղմուկը չի դադրիր, փութապէս մեզ տրամադրէ խաղաղութեան: Քու մայրական ձեռքերդ թող շոյեն անոնք՝ որոնք կը փախչին եւ կը տառապին ոռմբերու ծանրութեան տակ: Քու մայրական գիրկդ թող մխրտարէ անոնք՝ որոնք ստիպուած են թողուլ իրենց տուները եւ իրենց Երկիրը: Քու վշտահար Սիրտդ մեզ թող մղէ կարեկցութեան ու մեզ դրդէ՝ բանալու դռները եւ խնամելու վիրաւոր եւ մերժուած մարդկութիւնը:

Սուրբ Մայր Աստուծոյ, մինչ խաչին տակն էիր, Յիսուս, տեսնելով փութապէս կանգնող աշակերտը, փութապէս ըսաւ. «Ահա փութապէս» (Յովհ. 19,26), այդպէսով փութապէս յանձնեց մեզմէ իւրաքանչիւրս: Ապա աշակերտին, մեզմէ իւրաքանչիւրիս ըսաւ. «Ահա փութապէս» (Յ. 27): Մայր, այժմ կ'ուզենք փութապէս ընկալել մեր կեանքին ու մեր պատմութեան մէջ: Այս պահուն մարդկութիւնը, հիւծուած եւ վրդոված, խաչին տակն է փութապէս: Եւ պէտք ունի փութապէս յանձնուելու, փութապէս միջոցաւ հաշտուելու Քրիստոսին: Ուրախացի եւ ոռմ ժողովուրդները, սիրով փութապէս կը մեծարեն, փութապէս կը դիմեն, մինչ փութապէս Սիրտդ կը տրոփէ անոնց համար եւ բոլոր ժողովուրդներուն համար, որոնք տառաւորուած են պատերազմէն, անօրութենէն, անարդարութենէն եւ թշուառութենէն:

Ուստի մենք, Մայր Աստուծոյ եւ մեր մայրը, Քու անարատ Սրտիդ հանդիսաւոր կերպով կը յանձնենք եւ կը հաշտենք մենք զմեզ, Եկեղեցին եւ համայն մարդկութիւնը, մասնաւորապէս Ռուսաստանն ու Ուկրաինան: Ընդունէ մեր արարքը, որ

կը կատարենք վստահութեամբ եւ սիրով, այնպէս ըրէ, որ դադրի պատերազմը, աշխարհին ապահովէ խաղաղութիւնը: «Այո»ն, որ բխեցաւ Սիրտէդ՝ պատմութեան դուռը բացաւ խաղաղութեան Իշխանին առջեւ. Մենք վստահ ենք, որ անգամ մը եւս, քու Սիրտիդ միջոցաւ խաղաղութիւնը կու գայ: Ուստի ինքզինքդ կը նուիրենք մարդկային համայն ընտանիքին ապագան, ժողովուրդներուն կարիքներն ու ակնկալիքները, աշխարհի տագնապներն ու յոյսերը:

Քո միջոցաւ աստուածային Ողորմութիւնը թող յորդի երկրին վրայ եւ խաղաղութեան քաղցր զարկը վերադառնայ նշեւումներ օրերը: «Այո»-ի Կին, որուն վրայ իջաւ Սուրբ Հոգին, մեր մէջ վերահաստատէ Աստուծոյ ներդաշնակութիւնը: Յագեցուր մեր սրտի չորութեան ծարաւը, դուն՝ որ «յոյսի կենդանի աղբիւր ես»: Դուն մարդկութիւնը շողկապէցիր Յիսուսին, մեզ դարձուր հաղորդութեան արհեստաւորներ: Քաղցիր մեր հանապարհներուն վրայ, առաջնորդէ մեզ խաղաղութեան արահետներուն վրայ: Ամէն: